

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Անահիտ Բախշյանի, Ստյոպա Սաֆարյանի, Արմեն Մարտիրոսյանի, Լարիսա Ալավերդյանի, Արծվիկ Մինասյանի, Արտյուշ Շահբազյանի, Զարուհի Փոստանջյանի, Ռուստամ Գասպարյանի և Րաֆֆի Հովհաննիսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Ներկայացված օրենքի նախագծով նախատեսվում է հեռուստահաղորդումների եթերային հեռարձակում իրականացնելու համար սահմանել՝ մեկ մարզի տարածքում սփռման համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի, մայրաքաղաքից դուրս մեկ մարզի առանձին քաղաքների և գյուղերի տարածքում սփռման համար՝ տարեկան բազային տուրքի 50-ապատիկի և մեկից ավելի մարզերի ամբողջ տարածքում սփռման համար՝ տարեկան բազային տուրքի 150-ապատիկի չափով պետական տուրքեր:

Համաձայն նշված օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման՝ օրենքի նախագծի նպատակն է արձագանքել մարզային հեռուստաընկերությունների արդարացի բողոքին և չեղյալ համարել տարածքային (մարզային) հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններից գանձվող պետական տուրքի անհիմն բարձրացումը:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ անալոգային լիցենզիաների գործողության ժամկետը մինչև 2015 թվականը երկարաձգած մարզային հեռուստաընկերություններն իրենց անալոգային լիցենզիաների գործողության ժամկետում տարեկան պետական տուրքը պետք է վճարեն «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ կետով սահմանված դրույքաչափերով. ֆիզիկական անձանցից՝ տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով, իսկ իրավաբանական անձանցից՝ տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով, ինչը նշանակում է, որ նշված հեռուստաընկերությունների համար պետական տուրքի դրույքաչափերը չեն բարձրացել:

Միաժամանակ, նշված դրույթների տարաբնույթ ընկալումից խուսափելու նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթրել պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից արդեն իսկ հաստատվել է Պետական տուրքի վճարման որոշ հարցերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանումը (կցվում է):

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը չկա:


Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման
ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարար


Վ. Գարիբյան
« 27 » « Դեկտեմբեր » 20 10 թ.
N _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության արհմիջոց
պետական նկատման կոմիտեի
նախագահ
Գ. Խաչատրյան


« 23 » « Դեկտեմբեր » 20 10 թ.
N 32

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հունիսի 10-ի ՀՕ-100-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2010 թվականի հունիսի 28-ին) «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների եթերային հեռարձակումն իրականացվում է թվային հեռարձակման ցանցի միջոցով: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Ազգային հանձնաժողովը յուրաքանչյուր տասը տարին մեկ՝ սկսած 2010 թվականի հուլիսի 20-ից, հայտարարում է թվային հեռարձակման ցանցի միջոցով եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստահեռարձակողների մրցույթ՝ հանրապետական, մայրաքաղաքային և տարածքային սփուման նույն հոդվածով սահմանված թեմատիկ ուղղվածություն ունեցող և նույն հոդվածում նշված քանակությամբ հեռուստառնկերությունների համար, իսկ 7-րդ մասի համաձայն՝ թվային հեռարձակման ցանցի միջոցով Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում և Երևան քաղաքում հեռարձակում է իրականացնում ընդհանուր ուղղվածության ու տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող մեկական տարածքային սփուման մասնավոր հեռուստառնկերություն: Նույն օրենքի 62-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մարզային հեռուստառնկերությունների (դրանց թվում չեն ներառվում Երևան քաղաքում գործող լիցենզավորված հեռուստառնկերությունները) անալոգային լիցենզիաների գործողության ժամկետը երկարաձգվում է մինչև 2015 թվականի հունվարի 1-ը, բացառությամբ նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 2010 թվականի հուլիսի 20-ին Ազգային հանձնաժողովի հայտարարած տասնույթ հեռուստահեռարձակողների լիցենզավորման մրցույթի արդյունքում լիցենզավորված մարզային հեռուստառնկերությունների (դրանց թվում չեն ներառվում Երևան քաղաքում գործող լիցենզավորված հեռուստառնկերությունները) նկատմամբ տարածվում են այդ մրցույթի արդյունքում լիցենզավորված բոլոր հեռուստառնկերությունների համար նույն օրենքով սահմանված դրույթները:

Մինչև «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի ՀՕ-121-Ն օրենքն ուժի մեջ մտնելը «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 9.6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված էր մեկ մարզի տարածքում հեռուստահաղորդումների

հեռարձակման համար տարեկան պետական տուրքի դրույքաչափ՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով: «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի ՀՕ-121-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2010 թվականի հոկտեմբերի 17-ին) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 9.6-րդ կետի «ա» ենթակետով սահմանվեց հեռուստահաղորդումների եթերային հեռարձակում իրականացնելու՝ տարածքային սփռման համար տարեկան պետական տուրքի դրույքաչափ՝ բազային տուրքի 1000-ապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ կետով սահմանված է նույն հոդվածի 1-18.4-րդ, ինչպես նաև օրենքի 19.1-րդ և 19.2-րդ հոդվածներում չնշված լիցենզիաների, արտոնագրերի (թույլտվությունների) համար տարեկան պետական տուրքի դրույքաչափ՝ ֆիզիկական անձանցից տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով, իսկ իրավաբանական անձանցից տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Առկա իրավիճակում տարաբնույթ է ընկալվում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով գործողության ժամկետը մինչև 2015 թվականի հունվարի 1-ը երկարաձգված՝ մարզային հեռուստաընկերությունների (դրանց թվում չեն ներառվում Երևան քաղաքում գործող լիցենզավորված հեռուստաընկերությունները) անալոգային լիցենզիաների համար տարեկան պետական տուրքի դրույքաչափի հարցը:

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը տրվում է իրավական ակտի պաշտոնական մեկնաբանման համար նախատեսված կանոններով, իսկ նշված օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը: Հաշվի առնելով վերը նշվածը, *պաշտոնապես պարզաբանում եմ.*

1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի ՀՕ-121-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2010 թվականի հոկտեմբերի 17-ին) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 9.6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված տարածքային սփռման համար տարեկան պետական տուրքի դրույքաչափը չի տարածվում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով գործողության ժամկետը մինչև 2015 թվականի հունվարի 1-ը երկարաձգված՝ մարզային հեռուստաընկերությունների (դրանց թվում չեն ներառվում Երևան քաղաքում գործող լիցենզավորված հեռուստաընկերությունները) անալոգային լիցենզիաների վրա:

2. 2010 թվականի հոկտեմբերի 17-ից սկսած «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով գործողության ժամկետը մինչև 2015 թվականի հունվարի 1-ը երկարաձգված՝ մարզային հեռուստաընկերությունների (դրանց թվում չեն ներառվում Երևան քաղաքում գործող լիցենզավորված հեռուստաընկերությունները) անալոգային լիցենզիաների համար տարեկան պետական տուրքը ենթակա է վճարման «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ կետով սահմանված դրույքաչափով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր
МИНИСТЕРСТВО ФИНАНСОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
М И Н И С Т Р
MINISTRY OF FINANCE OF THE REPUBLIC OF ARMENIA
M I N I S T E R

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
0010, Ереван, ул. Мелик-Адамяна 1
1 Melik-Adamyan str., Yerevan, 0010
Հեռ./Тел./Phone (+374 10) 59 53 04
Ֆաքս/Факс/Fax (+374 10) 52 42 82
Էլ. փոստ/Эл. почта/E-mail: minfin@minfin.am
Web page: www.minfin.am

№ _____
Ձեռ № _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
պրն. Ս. ԴԱՎԹՅԱՆԻՆ

Հարգելի նախարար

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի ս.թ. հունվարի 17-ի թիվ 02/10.1/281-11 հանձնարարականի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Անահիտ Բախշյանի, Սյոդպա Սաֆարյանի, Արմեն Մարտիրոսյանի, Լարիսա Ալավերդյանի, Արծվիկ Մինասյանի, Արտյուշ Շահբազյանի, Զարուհի Փոստանջյանի, Ռուստամ Գասպարյանի եւ Բաֆֆի Հովհաննիսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած՝ «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ազդեցության գնահատականի վերաբերյալ հայտնում ենք հետեւյալը:

Վերոնշյալ նախագծով նախատեսվում է հեռուստահաղորդումների եթերային հեռարձակում իրականացնելու համար սահմանել մեկ մարզի տարածքում սփռման համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի, մայրաքաղաքից դուրս մեկ մարզի առանձին քաղաքների եւ գյուղերի տարածքում սփռման համար՝ տարեկան բազային տուրքի 50-ապատիկի եւ մեկից ավելի մարզերի ամբողջ տարածքում սփռման համար՝ տարեկան բազային տուրքի 150-ապատիկի չափով պետական տուրքեր:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքով տարածքային սփռման համար սահմանված է բազային տուրքի 1000–ապատիկի չափով պետական տուրք:

“Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն թվային հեռարձակման ցանցի միջոցով Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում եւ Երևան քաղաքում հեռարձակում է իրականացնում ընդհանուր ուղղվածության ու սովյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող մեկական տարածքային սփռման մասնավոր հեռուստաընկերություն:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ օրենքի համաձայն հանրապետության մարզերում պետք է հեռարձակում իրականացնեն 10 լիցենզավորված հեռուստաընկերություններ, այսինքն՝ պետական տուրքի մասով կհավաքագրվի 10 մլն դրամ ($10 \times 1 \text{ մլն} = 10 \text{ մլն դրամ}$), իսկ ներկայացված նախագծի համաձայն մեկ մարզի տարածքում սփռման համար նախատեսվում է հավաքագրել 9 մլն դրամ ($100\,000 \times 10 = 1 \text{ մլն դրամ}$), ներկայացված օրենքի նախագծի ընդունմամբ պայմանավորված պետական բյուջեի եկամուտները կնվազեն 9 մլն դրամով ($10 \text{ մլն} - 1 \text{ մլն} = 9 \text{ մլն}$):

Միաժամանակ, հայտնում ենք, որ մարզերում հեռարձակում իրականացնող անալոգային հեռուստաընկերությունների լիցենզիաների ժամկետը երկարաձգվել է մինչև 2015 թվականը եւ դրանց մասով վճարվող պետական տուրքերի վերաբերյալ տրվել է պաշտոնական պարզաբանում, համաձայն որի վերջինների մասով պետական բյուջեի եկամուտներում փոփոխություններ տեղի չեն ունենա, քանի որ համաձայն վերոնշյալ պարզաբանման տարածքային սփռման հեռուստահաղորդումներ իրականացնող իրավաբանական անձինք պետք է վճարեն 50 000 դրամ տարեկան պետական տուրք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Կատ.՝ Տուրքերի եւ այլ պարտ. վճարների գծով
քաղաք. եւ վարչարարության մեթոդ. բաժին
Հեռ. 595 338

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

Սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

1. Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագիծն ունի դրական ազդեցություն և համաձայն փորձագիտական գնահատականի՝ դրա հետագա լրամշակման անհրաժեշտություն չկա:

2. Նախագծի դրական ազդեցությունն արտահայտվում է շահառուների վրա ունեցած իր ազդեցությամբ, իսկ ռազմավարական տեսանկյունից այն էական ազդեցություն չունի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՀԱԿԱԿՈՒՌՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ վերոնշյալ օրենքի նախագծի ընդունման դեպքում դրա կիրարկման արդյունքում տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում զգալի ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում տնտեսական աճի և ներդրումների ներգրավման վրա:
2. «Գործարարությամբ զբաղվելը» համաթվի բաղադրիչները չեն ներառում կարգավորման ենթակա ընթացակարգերը:
3. ՓՄՁ զարգացման ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած ցուցանիշների ցանկը չի ներառում խնդրո առարկա փաստաթղթի հետ կապված ցուցանիշները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով զգալի ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

«Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ վերոնշյալ օրենքի նախագծի ընդունման դեպքում դրա կիրարկման արդյունքում մրցակցության բնագավառում զգալի ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում ապրանքային շուկայում մատակարարների քանակի ուղղակիորեն սահմանափակմանը կամ սահմանափակման հնարավորությանը:
2. Ապրանքային շուկայում մատակարարների քանակի անուղղակիորեն սահմանափակմանը կամ սահմանափակման հնարավորությանը:
3. Միմյանց հետ մրցելու մատակարարների հնարավորության սահմանափակմանը կամ սահմանափակման հնարավորությանը:
4. Միմյանց հետ մրցելու մատակարարների շարժառիթների սահմանափակմանը կամ սահմանափակման հնարավորությանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով զգալի ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

Եզրակացություն

«Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ /այսուհետ նախագիծ/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման համաձայն:

1.Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագիծն ունի դրական ազդեցություն և համաձայն փորձագիտական գնահատականի՝ դրա հետագա լրամշակման անհրաժեշտություն չկա:

2.Նախագծի դրական ազդեցությունն արտահայտվում է շահառուների վրա ունեցած իր ազդեցությամբ, իսկ ռազմավարական տեսանկյունից այն էական ազդեցություն չունի:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների, վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չի հակասում: Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Նախագիծ
Պ-1057-15.12.2010-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 9.6-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) 9.6.1. հեռուստահաղորդումների եթերային հեռարձակում իրականացնելու համար՝

9.6.1.1.	հանրապետական սփյուռման համար՝ տարեկան	բազային տուրքի 20000-ապատիկի չափով
9.6.1.2.	մայրաքաղաքային սփյուռման համար՝ տարեկան	բազային տուրքի 10000-ապատիկի չափով
9.6.1.3.	մեկ մարզի տարածքում սփյուռման համար՝ տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով
9.6.1.4	մայրաքաղաքից դուրս մեկ մարզի առանձին քաղաքների եւ գյուղերի տարածքում սփյուռման համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
9.6.1.5.	մեկից ավելի մարզերի ամբողջ տարածքում սփյուռման համար՝ տարեկան	բազային տուրքի 150-ապատիկի չափով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նպատակն է արձագանքել մարզային հեռուստաընկերությունների արդարացի բողոքին եւ չեղյալ համարել տարածքային/մարզային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններից գանձվող պետական տուրքի անհիմն բարձրացումը: Խոսքը մեկ մարզի տարածքում սփռում ապահովող հեռուստաընկերությունների մասին է, որոնք մեծ մասամբ սահմանափակված են մարզային մեկ քաղաքի տարածքով: Սակայն հատկանշական է այն, որ 2010 թվականի սեպտեմբերի 16-ին ընդունված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքով (ՀՕ-121-Ն) օրենսդիրը անտեսել է մեկ մարզի առանձին քաղաքում, գյուղում եւ մեկ մարզի ամբողջ տարածքում, ինչպես նաեւ մեկից ավելի մարզերի տարածքում հեռարձակվող հեռուստաընկերությունների տարբերությունը, անտեսելով մի քանի կարեւոր հանգամանք: Դրանք են՝

- մարզերի առանձին տարածքներում գործող հեռուստաընկերությունների՝ առաջիկա արտոնագրման մրցույթին չմասնակցելը եւ հետեւաբար իրենց գործող լիցենզիաների երկարացումը մինչեւ 2015 թվական պահպանում է անալոգային հեռարձակման համար տրված լիցենզիաների թե՛ իրավունքները, թե՛ պարտավորությունները, այդ թվում ֆինանսական,

- տեղական հեռուստաընկերությունների հանրային դերը տեղական մակարդակով լրատվություն տարածելու գործում անփոխարինելի է,

- սփռման գոտիների գովազդային շուկաների տարբերությունը եւ հետեւաբար եկամուտների ստացման էական տարբերությունը:

Այսպիսով, հավասար մրցակցության համար ստեղծվել են անբարենպաստ պայմաններ, որոնք իրականում վտանգել են մարզերում գործող տեղական հեռարձակողների գոյությունը:

Կարելու է նաև համարում նաեւ ընդգծել այն, որ որոշ մարզային հեռուստաընկերությունների տարեկան եկամուտը կազմում է առաջարկվող պետական տուրքի 30%-ը, ինչը չափազանց մեծ գումար է փոքր հեռուստաընկերությունների համար եւ հարցականի տակ է դնում պետական տուրքի չափի ողջամտությունը:

Առաջարկվող նախագիծը կոչված է ապահովելու մրցակցության հավասար պայմաններ, ինչպես նաեւ սահմանելու բազային տուրքի ողջամիտ չափը:

Եզրափակելով, հարկ է նաև համարում սույնով արձագանքել մարզային հեռուստաընկերությունների արդարացի բողոքին եւ հայտնել, որ պետական տուրքերի չափերի վերանայումը հրատապ լուծում պահանջող հարց է, որը պետք է արժանանա գործադիր եւ օրենսդիր իշխանությունների լուրջ ուշադրությանը: